ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 755-Ա

«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 12.04.2024թ. N 55-Ա որոշումը, Ալավերդի համայնքի ղեկավարի 12.04.2024թ. N 672-Ա որոշումը, «ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» փակ բաժնետիրական ընկերության՝ 09.04.2024 թվականին կայացած արտահերթ ժողովի թիվ 02/24 արձանագրությունը, սեփականության իրավունքի N 2286441 վկայականը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 09.04.2024թ. տրված N ՄՏ-09042024-06-0172 միասնական տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1.«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության կողմից որպես նվիրատվություն ընդունել Ալավերդի համայնք, Շամլուղ քաղաք, 1-ին փողոց, 6/1 հասցեում գտնվող, նույն ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, կադաստրային 06-005-0012-0021 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 0.1015 հա մակերեսով հողամասը և նրանով ծանրաբեռնված գույքը՝ հիվանդանոցը:

2.Նշված գույքի զբաղեցրած հողամասը գրանցված է պայմանով, որի կադաստրային արժեքի վճարը կատարվում է «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության կողմից:

3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

4. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. ապրիլի 26
ք. Ալավերդի